



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 42

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

«ՄԵՆԷ ԵՆ ԱՆՈՆԵ»

Հայ եկեղեցականությունը

Ամուսնական Հրահանգը

Ծաղիկներուն Վիճքը

ԱԼՊԷՌ ՍԱՄԷՆ-Ի

Զրաքը [Վ. Խաչատրյան]

Պոլիսի Այսօրուան Աշխարհաբարը

Կի Տը Մօթասան

[Գրական Ուսումնասիրություն]

ԷՄԻԼ ԶՕԼԱ-Ի

Մանրանկարը

Դառնապիլին Դամակը Խմբագիրին

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԵՐՃՈՒՅԻ ԵԱԶԸՃԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՌԻԴՈՒՐԼԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ԴՐՍԱՆ ԽՈՉՐՈՎ

Ա. ՍՕԼԱԽԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՃԻՀԱՆ

1907

ՏՕԻԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ շարժման հետքերը, մասնագիտաբար և երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղիքներու, միշտային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր գաղիական ախտերը : Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ : Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը : Զորեքչարթի օրերը միայն ձրի :



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է : Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռփ, ոսփ ու ոսփ եւ ձեռփ
միանգամայն մեքենաներ
կը գտնուին :

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդատաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

Ն
Ե
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր
Ս
Ի
Ն
Կ
Է
Ր

ԿԱԼԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ՍԿԻՍԵՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառչի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայանին դէմ. 13.
2. Զարը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ձրի :

Կատարելաւ երաւեստութիւն :

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը :

ՄԵՐ ՀԱՇՈՒԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Ահաւասիկ մեր Հաշուաբան Մրցումին ստացուած պատասխաններուն վրայ Պէտրոս Էփ. Ասրունիի քննութեան տեղեկագիրը .—


Նախ խնդիրին մէջ տրուած գիները մէկ տեսակ ստակի պէտք է վերածել, իբր Ղրուշի միութիւն մէճիւտը 19էն, կամ 20էն և կամ ոսկին 100էն ընդունելով. ամբողջ գիները պէտք է վերածել մէճիւտը 19էն միօրինակ Ղրուշի .

Ա. տեսակ գինի	150	Քիւօն	262. 50	Ղրշ. որով մէկ քիւօն	1.75	Ղրշ.
Բ. » »	25	»	42. 50	» » » »	1.70	»
Գ. » »	100	»	140. 00	» » » »	1.40	»
Դ. » »	75	»	97. 50	» » » »	1.30	»
Ե. » »	125	»	156. 25	» » » »	1.25	»
Զ. » »	50	»	60. 00	» » » »	1.20	»

Իսկ մէկ տակաւին ծախու գինը պիտի ըլլայ 494 Ղրշ. : Մէկ տակաւին մէջ 20 քիւօ ջուր և 230 քիւօ խառնուրդ գինի պիտի գտնուի. այդ 230 քիւօ խառնուրդն ալ պիտի արժէ 344.80 Ղրշ. որ կը գտնուի 494էն պակսեցնելով .

Ակնկալուած չափը	123.67	Ղրշ.
Տակաւին փոխարժէքը	23.00	»
Խառնուրդի ծախքը	2.50	»
20 քիւօ ջուրի փոխարժէքը	0.03	»
	149.20	

Ըսել է, 230 քիւօ խառնուրդ գինիին մէկ քիւօին արժէքը, այսինքն միջին գինը, պիտի ըլլայ 1.50 Ղրուշ. : Խնդիրը այսպէս պարզելէ ետքը, կարելի է զայն լուծել թուաբանութեան խառնուրդի (règle des mélanges) և կամ կեղծ դրութեան (règle de fausse position) կանոններով : Խառնուրդի կանոնով լուծելու համար պէտք է միջին գինին աւելի բարձր և աւելի վար գիներէ ունեցած տարբերութիւնները գտնել. ասոնցմէ առաջինները վար գին ունեցող գինիներէն առնուելիք քանակութիւնները կը ցուցնեն : Իսկ միւսները՝ բարձր գին ունեցող գինիներէն առնուելիք քանակութիւնները . սակայն, գինիները 6 տեսակ ըլլալով, գիններուն միջին գինէն ունեցած տարբերութիւններն ալ թիւով 6 պիտի ըլլան : Այս տարբերութիւնները իրարու հետ բազաղրելով կա-



ՅԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՇՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԾԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 42

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

“ՄԵՆՔ ԵՒ ԱՆՈՆՔ”

Անցած Կիրակին Պոլիսի Բողոքական Հայերուն լրաց կը ծա-
թէր ցնծաւթ արեւծագոյլ մը, աւետեւթ անոնց ընծայումը
ինքնուրոյն եկեղեցիի մը, նորակա ռոյց հոյաչէն տաճարը Ս. Են-
լը-Չէշմէի, որուն կանգնումը ցանկալի պատկումն էր իրենց
երազին, իբր առաջին աղօթարանը, թէ՛ իր հիմնարկութեան
գաղափարովը, եւ թէ՛ արտեւտական մարմնաւորումովը:

Առաջին անգամը ըլլալով Պոլիսի Հայ Բողոքական Հասարա-
կութեան անունով Աստուծոյ պաշտամունքին նուիրում աղօթա-
տեղիի մը գմբէթները կը ցցուէին երկինք, իրենց գագաթը
պարզելով թեւատարած՝ անմահ խորհրդանշանը խաչեցեալին,
— քառաթեւ խաչը, որուն համար աղօթքի ու պաշտելութեան
մրմունջներ ու հոգիի զոհագործութեան աղաղակներ պիտի
բարձրանան ասկէ ետքը, զայն դրկող կամարներուն տակ, որտե-
ւանդ ու հոգեհեղին հաւատքով:

Կառուցումը և Աստուծոյ նուիրումը այդ տաճարին , նոր թուական մըն էր Պոլիսի Հայ Բողոքականութեան համար , տեսակ մը կրօնական աղատազրութիւն , որ ինքնալար շաւիղի մը մէջ կը դնէ զիրենք՝ իրենց հաւատքին ու հոգեւոր գործունէութեանը մէջ , իրենց բնիկ անկախ եկեղեցիով :

Այդ նոր թուականին առթած ցնծութեան զգայութիւնը , դիտակից շերմեւանդութիւնով մը շեշտուած , աւետաբեր ազատ նիւի մը շունչին պէս կը սաւառնէր կիրակի օր , ներկայ հաւատացեալ Հայ Բողոքականներէ ամէնուն վրայ , որոնք մեծ աշուք ածնի մը կատարումին ինդութիւնովն էին համակուած :

Այդ կիրակին , է՛ր նաեւ կրօնքի հաշտութեան , հաւատքի անխտրական համերաշխութեան ցոյցի օր մը , ուր Հայ և Հայ Բողոքական հաւատացեալներ՝ կը բաժնէին օրուան ցնծութիւնը , անրիժ սրտակցութեան հոգեւանդ խանդավառութիւնով մը :

Ոչ-Բողոքական խումբն բազմութեան մը ներկայութիւնը և ուրախակցութեան նշանը՝ հզօր ապացոյց մը չ'էր այն հաճոյքին , որով կ'սղծունէին իրենց եղբայրներուն մեծ հրճուանքը : Եւ ինչո՞ւ չը շեշտուէր այդ հաճոյքը , նորակառոյց եկեղեցիին խօսուն մէկ նշանին առջեւ մանաւանդ , դէպի Արեւելք ուղղուած իր դիրքով . Հայ եկեղեցիի օրէնքին համաձայն :

Եւ ինչ որ այդ յիշատակելի թուականին ամէնէն ուշագրաւ էջը կը կալմէր , Բողոքական Բեմի անզուգական զարդին , Հոլանտական Մատուռի և ամբողջ Բողոքական Համայնքին պերճախօս ու հանճարեղ քարոզիչին , Ռօպըրդ Քօլըճի սրահներուն հմուտ ու հմայիչ ատենաբանին՝ Բրոֆ. Ճէճիզեանի լիրապէս ուշադրութեան արժանի սրտազրաւ յայտարարութիւնն էր , որ ճշմարտապէս հզօր ու անկեղծ խանդաղատանքի մը զգայութիւնով յուզեց հոգին թորը ներկայ հասարակութեան , քրիստոնէական և եղբայրական խնկելի Սէրին ու ճշմարիտ հաւատքին , կրօնքի ճշմարիտ դաւանութեան , ճշմարիտ ոստուածահաճոյ կրօնքին զգացումը , սգին , նշանաբունը շեշտելով հոգիներու մէջ : Եւ ի՞նչ աւելի սրտայոյզ , աւելի դրաւիչ ու աւելի ծափելի , քան լսել , պաշտօնական օրուան մը մէջ , պաշտօնական բեմէ մը , — քրիստոնէական համերաշխութեան սա սրտա-

զին յայտարարութիւնը . —

Մենք ալ ահաւոր Աստուծոյ նուիրումս մեր սաճարը շինեցինք: Այս սաճարին կառուցումը շեշտելու համար չե՛մեր բաժանումը մեր սիրելի Ազգէն, Մեր Մայրենի Եկեղեցիէն, որուն զաւակներն ենք ամենքս, ինչպէս եղած են մեր հայրերը: Այլ մեր նպատակն է մեր եղբայրներուն հետ միասնաբար, աշխատիչ Առեսարանի ծառայումին: Մեզմէ ամեն մէկը քող գործակցի այդ գաղափարին եւ մեծ յոյս ունիմք որ՝ այս եկեղեցին արեւի պիտի մօտեցնէ մեզ մեր սիրելի Հայ եղբայրներուն եւ Հայ Եկեղեցիին: Երկրաւոր փցուն նկատումներ եւ խտրութիւններ չե՛նք որ պէտք է զբաղեցնեն մեզ, այլ Աստուած եւ ճշմարիտ Հաւատքը:

Այս համոզումը՝ հռչակուած նորայէն եկեղեցիին բեմէն և քարոզիչէ մը՝ որ խօսքին գիտակցութեանը, ճանաչումին և հեղինակութեանը կը միայնէ պաշտօնական փոխանորդութիւնը համայնքի մը՝ բարենշան այն կոչն է՝ որուն չը կրնար հաճոյքէն չը խռովիլ քրիստոնէական Սէրի և Հաւատքի ու Կրօնքի համերաշխութեան դադարաւորով վառուած ամէն հոգի:

Կիրակիի իր քարոզին մէջ, յուզիչ ու պերճախօս ա՛յնչափ՝ որչափ կրնայ ըլլալ, մինչև օտար բարձր կարողութիւնով քարոզիչի մը պատիւ բերելու աստիճան, ինչպէս են իր շատ մը քարոզները, Բրոֆ. Ճէճիլեան ինքզինքը գերազանցեց և ունկնդիրներու վրայ թողուց տալանորդութիւն մը՝ որ հիացումի բացադառնչութիւնով մը բանալ կուտայ անոնց բերանը: Այդ պերճախօսութիւնով ու նրտագին համոզումով ըրած իր յայտարարութիւնը, հզօր խոյանք մըն է դէպի քրիստոնէական համերաշխութեան դադարաւորականին պաշտելութիւնը, ճշմարիտ կոչումը և նշանաբանը Կրօնքին, որուն առաքելութիւնը անխտրական ոգիի անկեղծութիւնով հանդիսաւոր ատենէ մը ամբողջ համայնքի մը անունով հռչակող ձայնը կը շնորհաւորենք ու կ'ողջունենք սրտագին:

Այդ ձայնը կը վերցնէ «Մենք և Անոնք»ի խոտելի խտիրը, և Մայրենի Եկեղեցիին կը մօտեցնէ անշատ դաւանուած հօտի մը զաւակները:

Եւ չէ՞ որ այս անխտրական համերաշխութեան մէջ է ճշմարիտ կոչումը Կրօնքին, նուիրուած փառաբանութեանը և պաշտելութեանը այն Աստուածին, որ նո՛յն է և մէկ՝ ամէն ո՛ւն:

ԵՆՈՎ. Բ. ԱՐՄԷՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ]

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ «ՀՐԱՀԱՆԳ»Ը

Բ.

«Հրահանգ»ին վարկաբեկութիւնը պարարատող պարադոքս միայն աշխարհական ձայնին մերժումը չէ: Այդ մերժումը, ինչպէս ըսինք, խանգարում մը առաջ կը բերէ մեր տոհմային Եկեղեցիին բնայատուկ վարչական ձեւին ու կազմութեանը մէջ, և հօտը կ'առաջնորդէ կրօնաւորներու կոյր հնազանդութեան: Կայ տակաւին տոհմային եկեղեցիի ոգիին խնդիրը, որ բացարձակ հակոտնէութիւն մը կը կազմէ «Հրահանգ»ին պարունակած մոլար ոգիին հետ: — Ամուսնութիւնը, թէ՛ նկատենք կրօնական խորհուրդ և թէ՛ ընկերական դաշնակցութիւն, իրեն համար հիմ մը ունի: Եւ այդ հիմը վստահութիւնն է: Հոն, ուր գոյութիւն չունի վստահութիւնը, և զեղծումը կը մտնէ, հոն ալ ամուսնական չէնքը ամբողջովին խախտուած պէտք է նկատել: Վստահութեան զեղծումը, սկզբունքի տեսակէտով, չդադրիր զեղծում ըլլալէ, թէ իսկ մէկ կամ աւելի անգամներ գործուած ըլլայ: Թիւր կարեւորութիւն չունի. որակն է, որ գործի մը հանգամանքը կը վճռէ՝ աւելի և աւելի: Եւ այն Հրահանգը, որ խաբուած էրկան մը կամ կնկան մը վրայ համբերող ինքնախաբութեան մը լուծը կը դնէ, ըսելով, թէ «մի անգամ, կամ քիչ անգամ պատահած, կամ առանձնական բնութիւն ունեցող յանցապարտ գործողութիւններ չեն կրնար լուծման բաւական պատճառ համարուիլ» (Յօդ. 12) կամ թէ այդ արկածեալներէն մէկը սպասցնել որ յանցապարտ գործողութիւնը «տեւողական, հաստատական և հրապարակահախատ» դառնայ, իր օձիքը կարենալ անգամաւոր համար, ասոնք ամուսնական կեանքին անհրաժեշտ եղող վստահութիւնը պահպանելու բնոյթը ունին: Մեր Եկեղեցիի Կանոնադիրքին ո՞ր տրամադրութիւններէն քաղուած է Հրահանգին այս յօդուածը: Հայ Եկեղեցիի ո՞ր ոգիին, ո՞ր սկզբունքին պատշաճումով վստահութեան զեղծումի գործը մինչև այս տեղուանքը տարուած է: Եթէ մեր Կեղրոնական Կրօն. Ժողովի հայրերը իրենց ընտանեկան շրջանակին մէջ պիտի յօժարէին՝ իրենց լայն ու համբաւուած ներողամտութեամբ վերաբերուիլ առանձնական հանգամանք ունեցող յանցապարտ գործողութիւններու դէմ, այդ պարադոքս պատճառ մը չկրնար ըլլալ, որ աշխարհականն ալ միեւնոյն ընթացքին հետեւի, կամ պարտաւոր ըլլայ հետեւիլ: Իւրաքանչիւր դատակարգին ձեռքն է իր ճակատագիրը վարել իր նկարագիրին, իր ճաշակին և իր սեփական Եկեղեցիի դարաւոր ոգիին համաձայն:

Կրօն. Ժողովին Հրահանգին 12—13 յօդուածները ամուսնական խորհուրդին նուիրականութեան մէջ կեղծիք մը կը մտցնեն, խաբէրու և խաբուեղու որոշ ուղղութեամբ մը. միայն որոշ կերպով ըսուած չէ, թէ ո՞վ պիտի ըլլայ խաբողը և ո՞վ խաբուողը: Եթէ առանձնական յանցապարտ գործողութիւնը, իր լծացումի խաղաղութեանը տակ պիտի պահէ ընտանեկան կեղծուած ու զիջուած ոգին, այդ մասին հոգը անգամ պիտի չընէ հասարակութիւնը: Բայց հանրութեան անգիտութիւնը և անփութութիւնը պիտի կրնան ամուսնական կեանքի խաղաղութիւնը ապահովել հոն, ուր վստահութեան զեղծում մը կայ: Ինչո՞ւ որոշ չիօսինք: Ամուսնական կապը շատ շատ կրնայ ընտանիք մը շահագրգռել. երբ այդ շահագրգռուող ընտանիքն է, որ լծակցութեան մէջ վստահութեան օրհնութիւնը կամ անվստահութեան պատիժը պիտի կրէ, ալ ինչո՞ւ մնաուել յանցապարտ գործողութեան հրապարակահայտ ըլլալու պարագան: Միտքի ու սիրտի չարչարանքը միեւնոյն է թէ առանձնականութեան և թէ հրապարակականութեան պարագային: Խզումը խզում է երկու պարագային ալ. ալ ինչո՞ւ ուրեմն արդիւնքը, ամուսնալուծումի արդիւնքը տարբերի երկու պարագաներու մէջ: Պատճառի, ցաւի, հիւանդութեան և կազմուածքի նոյնութիւնը ինչո՞ւ դարմանումի միեւնոյն ձեւին պէտք չունենայ: Մեր Եկեղեցիին ոգին միեւնոյնն է այս մասին և պիտի մնայ, և այդ ոգին սիրոյ, վստահութեան, ներքին կեանքի մաքրութեան վրայ հիմնուած է: Ո՛չ Հրահանգ և ո՛չ վճիռ կրնան մեր Ժողովուրդը և Եկեղեցին թիւրբել իր դարաւոր ուղղութիւնէն, և ամէն հակաեկեղեցական ձեռնարկ իր կամաւոր թիւրումներով պիտի խաթարէր Ժողովուրդին ողջմութիւնը, և ընտանիքը պիտի զրկէր իր քրիստոնեայակ կազմակերպութենէն:

Քանի մը ամիսներ առաջ քաղաքիս Հայ-Կաթողիկ Եկեղեցիին մէջ մկրտութիւն մը տեղի ունեցաւ: Կնքահայրն էր մեր քաղաքի պատուաւոր Հայերէն մէկը: Գերապայծառին յայտարարութեամբ Հայու մը կնքահայրութիւնը արգելուած է կաթողիկ սկզբունքով: Բայց Հայը կնքահայր եղաւ վերջապէս: Ասով մէկտեղ կը լսենք, թէ Կաթողիկ Եկեղեցիի մկրտութեան տոմարին մէջ բուն կնքահայրին տեղ ուրիշ Հայ կաթողիկի մը անունը նշանակուած է իբր կնքահայր, սա պատճառաւ քանութեամբ, թէ այդ կաթողիկ Հայը երախային մկրտութեանը պահուն լուսն կնքահայրէն գաղանի երախային ոտքը բռնած է եղիւր [*]:

[*] Այս օրերս ալ նմանօրինակ խնդիր մը կը դառնայ քաղաքիս մէջ: Դեղագործի մը երախան է, որ պիտի մկրտուի Կաթողիկ Եկեղեցիէն Հայ կնքահայրով. բայց որովհետեւ ծնողը չեն ուզեր, որ իրենց կնքահայրին վրայ ալ գործադրուի կնքահայրական կեղծիքի գրութիւնը, ստիպուած են յետաձգել իրենց զաւկին մկրտութիւնը: Նոյն խիկ կ'ըսուի, Թէ երախային ծնողը, այս պատճառով մտադրութիւն ունեցած են իրենց Մայրենի Եկեղեցին վերադառնալ: Բայց կ'ըսեն, Թէ իրենց մօրեղբայրը խոչընդոտ կը հանդիսանայ այդ դարձին:

կաթոլիկ եկեղեցիի ոգիէն կը բղխի այս կնքահայրական կեղծիքը , այս դրութեանական ու պաշտօնական սուտը , որուն պատասխանատուն ապահովարար Գերատաղածաւը չէ : Այդ կեղծուած արձանագրութիւնով չէ կարելի զԱստուած խաբել , որովհետեւ ան տեսաւ թէ կնքահայրը Հայ մըն էր . չէ կարելի երախային ծնողքը խաբել , որովհետեւ անոնք իբր իրենց զաւկին կնքահայրը կը ճանչնան ա'յն Հայը , որ իրենց երախան դրկեց . հետեւաբար արձանագրութեան մէջ մուտք գտած այդ զեղծումը , կը ծառայէ միայն մասնանշելու զեղծումի զրգող ոգին և զայն երկնող եկեղեցիին սկզբունքները : Այս կնքահայրական կեղծիքին և Հրահանգին պարտադրած ինքնախաբութեան կեղծիքին միջև տարբերութիւն չենք տեսներ մենք . երկուքին ալ ազը միեւնոյնն է . երկուքին ալ յղացումը հակահայաքրիստոնէական է և օտարածին : Լսած եմ եկեղեցականի մը թեւադրանքը՝ իր աշակերտին ուղղուած . «Ամէն բան կրնաս ընել, բայց զգուշացի՛ր որ հաստատական և հրապարականաբար չըլլան ըրածներդ» : Մեր լսածին չէինք ուզեր հաւատք ընծայել, բայց կը տեսնենք , որ այսօր այդ սկզբունքը պաշտօնական հանդամանք կ'առնէ :

Մինչև հիմա զրաճներէս յայտնի կ'երեւայ , թէ մենք նորութիւնս ներու հակառակորդ մը չենք . և չենք անոնցմէ , որոնք թալմուտաւ կաններու զառածումով մը կը պահանջեն , որ ամէն մարդ «իւր լարդապետին գործածած քառերով ուսուցանէ» : Ժամանակը , ընկերական առաջդիմութիւնները , պէտքերը անհրաժեշտ կ'ընեն այդ նորութիւնները , պայմանով սակայն , որ անոնց մէջ ողջմտութիւն մը գտնուի , և անոնք ներշնչուած ըլլան մեր եկեղեցիին դարաւոր գոյութիւնը ապահովող տոհմային ոգիէն : Եկեղեցին չկրնար ապրիլ եթէ մենք զինքը ապրելու ընդունակ չլինենք, և չտանք անոր ա'յն կենսական հիւթերը , որոնց ներաբկումէն կախում ունի եկեղեցականին ալ , եկեղեցիին ալ ու Աշխարհականին ալ անմոլար յարատեւութիւնը :

ՄԱՌԵՆՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

Օտար գրական նշանաւոր Դէմքերու մեր շարքին՝ ստորեւ կը ներկայացնենք երկրորդը , Կի Տը Մօրասան , ստորագրուած է միւլ Զօլաէ : Դրական ուսումնասիրութիւններու այս շարքին մէջ , — որուն սկսեալը հաճոյքով կը դիտենք թէ՛ մեծ ընդունելութիւնով ողջունուեցաւ ընթերցող հասարակութենէն և ուր հետզհետէ պիտի երեւան իպէսէն , Կոնքու եղբայրները , Պուռժէ , Զօլա , Կէօմէ , Նիշէ , Պալլաք , Սլօպէս , Բարլայլ , Իֆէնիսլըն , Ուլիման , և ինչ , — Դէմքերու այն տեսակ ընտրանք մը ըրած ենք՝ որոնց յաջորդական տողանցքով պատկերանան եւրոպական միջազգային տիեզերական ազգերու զրականութեան ամէնէն հսկայ ներկայացուցիչները :

Խմբ. Ծամ.

Կ Ի Տ Ը Մ Օ Բ Ա Ս Ա Ն

[ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ]

Ճանալով թարի առաջ Մօրասանը ճանչցայ Կիւսթով Ֆլօպէտի տունը : Դեռ աչքիս առջեւն է , երիտասարդ՝ իր փողփողուն և զուարթ աչքերովը , որդիական խոնարհութիւնով մը լուելով իր վարպետին քով : Կէս օրէն մինչեւ իրիկուն մօրիկ կ'ընէր մեզի , հաղիւ հետեւէ հետեւ ըստ մը փոխանակել համարձակելով : Յաղթանդամ պատա ինչ , այդ պայծառ և համարձակ զիմազիծերէն կը թորէր քաջառօղջ կեանքի և երջանկութեան անանկ զուարթութիւն մը , որ մեզի սիրցնել տուաւ զայն , մեր միջնորոտին մէջ բերած իր այդ այնքան անուշաբոյր և առողջարար բուրումին համար : Կը պաշտէր ամենազօրեւոր մարզանքները : Զարմանալի քաջութեան զրոյցներ արդէն կը չըլէին իր վրայ : Բնաւ միաքերնէս չէր անցներ որ՝ որ մը տաղանդ ալ կրնար ունենալ ան : Բիշ կողք լոյս տեսաւ Boule de Suiffe , քաղցրութիւնով և քաջութիւնով չաղախուած այդ հրաշալի գլուխ-գործոցը : Առաջին հարուածով կատարեալ դործ մը կ'արտադրէր , մեծ վարպետներուն կարգը կը դասուէր այսպէսով : Ատիկա մեզի մեծ հաճոյք պատճառեց , որովհետեւ ան մեր ամէնուս եղբայրը եղաւ , մենք որ անոր մեծնալը տեսած էինք , առանց անոր հանճարին վրայ կոսկածելու : Եւ այդ օրէն սկսեալ՝ ըստ չը դադրեցաւ արտադրելէ , այնչափ աւատօրէն , մեր սքանչանքը գրաւող վստահութիւնով և վարպետի կարողութիւնով : Շատ մը թերութեամբ կ'աշխատակցէր : Աւանդալէպերը , նորալէպերը իրարու կը յաջորդէին անհամառօմ պէսպիսութիւններով լեցուն , ամբողջովին հրաշալի կատարելութիւն մը , ամէն անգամուն ալ պատկերացնելով պզտիկ կատակերգութիւնով մը , տուած մը , կեանքին վրայ յանկարծական պատուհան մը բանալով : Զանկա կարգալով՝ կը խնդային , կու լային ու կը խորհէին : Կրնամ ձեզի ցոյց տալ իր կարճ պատմութիւններէն մէկ քանին , որոնք քանի մը էջերու մէջ կը պարփակեն ուրիշ շատ մը վիպապոյններու հատորներ լեցնելիք նիւթերու ոգին : Բայց արդէն անոնցմէ

չատերը Լաֆօնթէնի առականերուն կամ Վօլթէսի պատմութիւններուն պէս գտածական չեն :

Որովհետեւ զինքը կարդացողները միայն իրր նորավիպագիր կ'ընդունէին , Մօրասան ուղեց ընդլայնել իր շրջանակը , նորավէպին սահմանէն դուրս ելլելով : Եւ իր հանդարտ կամքովը և զինքը յատկանշող առողջութիւնովը հիանալի վէպեր գրեց , որոնց մէջ վիպողի բոլոր ձիրքերը իրենց բարձրութեան գագաթնակէտը հասան : Ներշնչումը , մարդկային այն հզօր ներշնչումը՝ որ դործերը հրայրքոտ և կենդանի կ'ընէ , իր վրայ ներգործած էր : Une Vieէն մինչև Notre Coeur , անցնելով Bel-Amiէն , Maison Tellierէն և Fort Comme la Mortէն , միշտ կեանքի միեւնոյն զօրաւոր և պարզ յայանութիւնն է , անսխալ վերլուծումը , ամէն բան ըսելու հանդարտ ձեւ մը , տեսակ մը վիհանձն և առողջ անկեղծութիւն՝ որոնք այնքան սիրտեր գրաւեցին : Եւ նոյն իսկ կ'ուզեմ մասնաւոր ակզ մը տալ Pierre et Jeanին , որ իմ կարծիքովս հրաշալիք մը , թանկագին դոճար մըն է , ճշմարտութեան և բարձրութեան այն գործը՝ որ բնաւ պիտի չը գերազանցուի :

Ինչ որ մեր աչքին կը զարնէր ամէնէն աւելի , մենք որ այնքան համակրութիւնով կը հետեւէինք Մօրասանին , անոր շուտով սիրտ գրաւէն էր : Հալիւ թէ պատմութիւնները հրապարակ կ'ելլէին , անմիջապէս հանրութիւնը իր ամբողջ սէրը անոր վրայ կը կեդրոնացնէր : Մէկ օրէն միւսը անուանի՝ նոյն իսկ չը քննադատուեցաւ . ժպտող երջանկութիւնը կարծես անոր ձեռքէն բռնած էր , առաջնորդելու համար ցանկալի բարձրութեանը : Ամէն պարագայի մէջ , չեմ հանդիպած այսչափ երջանիկ սկզբնաւորութեան մը , այսչափ շուտափոյթ յաջողութեան ուրիշ օրինակի մը : Ինչ որ իր ձեռքէն կ'ելլէր , օրափութիւնով կ'ընդունուէր . ինչ որ ուրիշին գրիչին տակ այլանդակ պիտի երևար , անոր քով , ը՛ դժակատար ժպտագին արտայայտութիւն մը կ'առնէր : Ամէն միտք գոհացում կը գտնէր իր գրուածքներուն մէջ : Ամէն զգայականութիւն կը յուզէր , և մեր աչքին առջև կ'ուենեայինք արտասովոր յայանութիւնը հուժկու և անկեղծ տաղանդի մը , որ յանկարծ կը շրջապատուի հիացումովը , նոյն իսկ պաշտումովը այն գրական , միեւնոյն ատեն այն միջակ հասարակութեան , որ ընդհանրապէս այնչափ դժուարութիւնով կը փոխարինէ ինքնատիպ արուեստագէտներուն մեկուսի առաջանալու իրաւունքը : Մօրասանի ամբողջ հանճարը այս երևուոյթին բացատրութեանը մէջ կը գտնուի : Առաջին վայրկեանէն իսկ սիրուելուն և հասկցուելուն պատճառը , ֆրանսական ոգին , անոր արժանիքները , անոր առաւելութիւնները արտայայտուին էր , յատկութիւններ որոնցմով լաւագոյն ցեղը եղած է Ֆրանսա : Զայն կը հասկնային , որովհետեւ անիկա պայծառութիւնը , պարզութիւնը և զօրութիւնն էր : Կը սիրէին զայն , որովհետեւ անիկա իր մէջը կը կրէր բա-

բութիւնը , հեղուքութիւնը որ բնաւ չար չէր , կայտառ զուարթութիւնը որ կը ծածկուի արցունքներու տալ իսկ : Այն ահագին սերունդին կը պատկանէր , որ մեր լեզուն թոթովումներէն կ'սկսի և կ'երկարի մինչև մեր օրերը : Իրր նախահայր ունեցած է Ռապրէն , Մօնթէնըն , Մոլիէնը , Լա Պօնթէնը , ամէնէն հզօրները և ամէնէն յստակները , անոնք որոնք ֆրանսական դրականութեան լոյսը և միտքն են եղած : Ընթերցողները , հիացողները չէին խաբուեր այդ մտածումին մէջ : Բնազգօրէն կ'երթային դէպի այն լուսաւէտ , մշտածոր աղբիւրը , դէպի մտածումի և ոճի այն գեղեցիկ զուարթախոնութիւնը , որ զիրենք կը դոհացնէր : Եւ անոնք երախտապարտ կ'զգային ինքզինքնին յուսուսա գրողի մը հանդէպ , իրենց տուած ըլլալուն համար , կատա-րելապէս պայծառ գործերովը , հաւասարակշռութեան և կորովի երջա-նիկ զգայականութիւնը : Ահ , այն պայծառութիւնը . ի՞նչ չնորհի աղ-բիւր , ուրկէ պիտի ուզէի որ զային իրենց ծարաւը յագեցնէին ամբողջ սերունդներ :

Եւ շատ սիրած եմ Մօբսսանը , որովհետեւ անիկա կատարելապէս կազմուած է լատին արիւնովը և կը պատկանի ազնուական մեծ գրա-գէտներու ընտանիքին : Անշուշտ պէտք է արուեստը սահմանափակել . պէտք է ընդունիլ հաւասարապէս կնճռոտութիւնները , նրբութիւնները և անհասկնալիութիւնները : Առողջութիւնը հող է , այդ արեւու լո-գանքին մէջ , այդ կոհակին մէջ՝ որ կուգայ կը շրջապատէ ձեր ամէն կողմէն : Կարելի է որ Մօբսսանի այն էջը , որուն վրայ կը հիանանք մենք , ցաւազին ճիգի մը աղբեցութեանը տակ գրուած է : Ի՞նչ փոյթ եթէ այդ յոգնութիւնը անյայտ կը մնայ , եթէ անկէ ծորող բնակա-նութենէն և յամր զօրութիւնէն վերկենդանացած ենք մենք : Այդ էջը կ'աւարտէ զուարթութեան ճառագայթումով մը , բարոյական և ֆիզի-քական այն խնդութիւնով՝ զոր ցորեկուան երկար պտոյտ մը մեր վրայ կը թողու :

Շարունակական արտադրութեան երկար տարիներ իրարու կը յա-ջորդէին և Մօբսսան , հետզհետէ բարեշրջուելով , զննութիւններու ուրիշ երկիրներ կ'անցնէր : Ամէն ասուն հետաքրքրութիւնը կ'ունենար նոր երկիրներ , անձանօթ վայրեր տեսնելու : Խիստ շատ կը ճամբոր-դէր , միշտ հետը բերելով ճամբորդած երկիրներէն կրած տպաւորու-թիւնները : Որովհետեւ պայծառութիւնը և պարզութիւնը կը սիրէր , կը խրոչէր գրողի արուեստէն : Ոչ մէկ մարդ իրմէ աւելի մեկան հոսած է , և կը պատահէր որ գրականութեան վրայ չխօսիլը ծայրայեղութեան տանէր . գրագէտներէ բոլորովին մեկուսացած կ'ապրէր , ապրուստի համար աշխատելով , ինչպէս կ'ըսէր , և ոչ թէ փառքի համար : Ասիկա մեզի քիչ մը կը զարմացնէր , մենք , որ մեր ունեցած գրականութեան զաղափարովը էութիւննիս փճացուցած ենք : Սակայն , այսօր կը հաս-

կնամ որ իրաւունք ունէր : Կ'արժէ կեանքը ապրիլ , մի' միտքն առ-
րած ըլլալու համար , առանց աշխատելու : Պէտք է ապրիլ ճանչնալու
համար զայն , և ճիշդ է որ Մօքատան իր վերջին տարիներուն մէջ ար-
տակարգօրէն լայնցուցած էր , զիւղացիներուն և քաղաքացիներուն հետ
ունեցած բարեկամութիւնը . և կնոջ հանդէպ ունեցած էր աւելի աղ-
նիւ և աւելի խորունկ զգացում մը , որ հետազօտուած և խորիմաստ
գործեր արտադրել տուած է իրեն :

Աղէկ գիտեմ որ շատեր կ'սկսէին ցաւիլ նախկին Մօքատանին
վրայ , և ես իսկ քիչ մտաւորաբար թիւնով չէր որ կը գիտէի իր միտքի
գեղեցիկ հաւասարակշռութեան օրըստօրէական անկումը : Բայց հոս
տեղը չէ անոր գործերուն ամբողջութիւնը դատելու : Բայց անմիջապէս
աւելցնեմ որ՝ զրականութեան կարծեցեալ այդ անտարբերը խելայեղօ-
րէն սիրած է իր արուեստը , և ամէն ատեն մնտուած է զայն և ջանա-
ցած է միշտ առաջդիմել : մարդկային ճշմարտութիւնէն նրբացած
խմտութիւնովը :

Ամէն տեսակ երջանկութիւններով ուղղուած էր : Կ'ուզեմ տեսնել
զինքը իր ժպտուն դէմքովը , վստահ իր տարած գրական յաղթանակին
վրայ , երբ կու գար ձեռքս սեղմել , իր երկտասարդութեան զուարթու-
նակ օրերուն : Կ'ուզեմ տեսնել զայն , շատ վերջը , իր յաջողութեանը
ատենը , ա'յնչափ քաղցրաբարոյ , ա'յնչափ համարձակ , ամէնէն սիրալիւր
կերպով ընդունուելով , փառաբանուելով եւ բարձրանալով մինչեւ
փառքին գագաթը , անճիգ սաւառնումով մը :

Ամէն կերպով բախտաւոր էր ան . իր դէմ նախանձոտ մը չ'եղաւ
ընա'ւ , իր այն յանկարծական յաջողութեան մէջ նոյն իսկ , որովհետեւ
իր յաղթանարած սիրտերը զբաւել գիտէր : Իր առաջին վարկեանին ու-
նեցած բարեկամներէն ո'չ մէկը չէին նախանձեր իր առաջադիմութեանէն .
ա'յնչափ անկեղծ և մտերիմ ընկեր մը մնացած էր անոնց : Ուրեմն ճիշդ
է որ ճակատագիրը մեծապէս նպաստած է իրեն : Անոր առջեւէն պա-
րիկներու երթալը կ'զգացուէր , բարեգործ պարիկներու , որոնք իր
ճամբուն վրայ ծաղիկներ կը սփռեն , մինչեւ աստուածացումի պսակումը ,
առաջացած ծերութեան մը ատեն : Եւ մանաւանդ կ'ուրախանային
անոր յաւիտեանական առողջութեանը վրայ , և , իրաւացիօրէն , զինքը
մեր ամէնէն հաւասարակշիւ խառնուածքը կը հռչակէին , ամէնէն յստակ
երեւակայութիւնը , ամէնէն առողջ միտքը : Եւ այն ատեն էր որ չոնթի
սարսափելի հարուածը զայն անէացուց :

* * *

Աստուած իմ , Մօքատան՝ խելքը խախտու՛մ :—Ամբողջ այդ երջանկու-
թիւնը , ամբողջ այդ առողջութիւնը մէկ հարուածով լուծու՛ւի այդ գարշու-

թեան մէջ : Կեանքի անանկ արագ փոփոխութիւն մըն էր ադ , անանկ անսպասելի անգուշող մը կը բացուէր առջեւը որ , զինքը սիրողները , իր բերաւոր ընթերցողները , անոր նկատուածով տեսակ մը ցաւի եղբայրակցութիւն ստեղծած էին , և սիրտերնին պատրաստ էր ա որ համար ամէն վարկեան արիւնեկու : Չեմ ուզեր ըսել որ իր այդ փառքը ատանկ ողբերգական վերջաւորութեան մը ևս երեւակայութեանն երու մէջ ատանկ յանկարծական ցնցումի մը կը կարօտէր : Բայց իր յիշատակը , մահուան և ցաւի համար զգացած այդ ահուկի չարչարանքէն իվեր , չեմ գիտեր ի՞նչ գերազանցօրէն տխուր մեծութիւն մը առաջ բերաւ մեր մէջ , որ զայն բարձրացուց մինչև անսահման երեւմտաբարոսներուն առասպելին : Իր գրագէտի համբաւէն դուրս , պիտի մնայ ան մէկը այն մարդերէն , որոնք ամէնէն երջանիկը և միեւնոյն ատեն ամէնէն զգալիորէն եղած են աշխարհիս վրայ , պիտի մնայ ան որուն մէջ մենք յուսալը և խորաակուիլը կ'զգա՞նք մարդկութեան , պաշտուած , շփացած եղբայրը , յետոյ կորսուած մե'ր արցունքներուն մէջ :

Ասկէ զատ , ո՛վ կրնայ ըսել որ ցաւը և մահը չեն գիտեր ըրածնին : Անշուշտ , Մօբսսան որ տասնընից տարուան մէջ գրեթէ քսան հատորներ հրատարակեց , կրնար ապրիլ և եռապատկել իր գործերուն քանակութիւնը և մինակը լեցնել անոնցմով հսկայ գրագրարանի մը ամբողջ մէկ աչքը : Ատիկա պիտի ըսէի սակայն ես : Երբեմն մեղամաղձոտ մտատանջութենէ մը կը բռնուիմ , մեր դարուն ահուկիօրէն խօշոր արտադրութիւններուն վրայ խորհած միջոցիս : Այո՛ , ատոնք երկար և խղճամիտ երկասիրութիւններ են , յամառօրէն աշխատելու օրինակներ , եթէ կ'ուզէք : Միայն թէ՛ դէպի փառքը ուղղուելիք ճամբուն վրայ ծանր ծրարներ են անոնք : Այդ առասպելական ստուար փշխտութիւններէն միայն մէկ քանի էջ մնացած է : Ո՛վ գիտէ , թերեւս անմահութիւնը կը կայանայ երեք հարիւր տողէ բաղկացած նորավէպի մը , առակի մը և կամ հէքեաթի մը մէջ , զորս ապագայ դարերու զարոյցականները պիտի փոխանցեն իրարո՛ւ , իբր զասական կատարելագործութեան անմատչելի օրինակ մը : Եւ ատիկա պիտի ըլլայ Մօբսսանին փառքը , ամէնէն ճշմարիտը և ամէնէն հառադատուն փառքերուն :

Ուրեմն թո՛ղ քնանայ ան իր այնչափ դժուարութիւնով ձեռք բերած խաղաղ քունին մէջ : Պիտի ապրին անոնք , Մօբսսանն ալ ապրեցնելով իրենց հետ : Մենք որ զինքը ճանչցած ենք , պիտի պահենք յաւիտեան իր կայտառ և զգալի պատկերը , մեր սիրտին խորը , եւ ժամանակի ընթացքին մէջ , անոնք որոնք իր գործերէն պիտի ճանչնան միայն , պիտի սիրեն զայն յաւիտեանական սիրոյ այն քնարերգութեան համար , զոր իր ամբողջ կեանքին մէջ երգած է Մօբսսան :

Զլատը խորագրուած վիպակով , զոր կը հրատարակենք ստորեւ , մեր աշխատակիցը Միհրան Ուղուրեան վեր կը հանէ ընկերական խնդիր մը , շահագրգռական էջը մեր գրողին երու կեանքին , Հայ երիտասարդութեան ընկերական նախադիրին հետ կապ սնեցող այն հոգը , որով զբաղած է ինքը ամէնէն աւելի մեր մամուլին մէջ , տխուր դրուագներ պատկերացնելով և բարեքուտի միջոցներ քարոզելով : Իր այս վիպակին մէջ , ամբողջ Գրագիր Դասակարգը կ'անձնաւորէ միակ տիպարի մը վրայ , Կեանքի Պայքարի աշխատաւորներէն այդ Հատուածին ցուցնելով փրկութեան և բարեքուտի շեշտակի ուղի մը :

Զ Լ Ա Տ Ը

Անսահման խոնջէնքի շարժումով մը , թեւերը դասեղանին վրայ տարածեց Սրաքն Անմեղեան , ու լայն ճակատը , ուր մինչև այն ատեն բռնազրօս ու վաղանցիկ հանգարտութեան նշոյլ մը կը խաղար , սկսաւ նորէն թաքուն մտահոգութեան մը ստուերներովը կնճռտիլ . . . : Սեն-հակը , որուն խորը առանձին նստած կը մնար երիտասարդը , լեցուն էր իր սիրտին , իր հոգիին խօսող յուզիչ յիշատակներով : — Դիմացը , պատին վրայ , իր տարտամ նայուածքը կը մոլորէր հօրը — շատո՛նց մեռած — մեծադիր լուսանկարին վրայէն զայն չըջապատող բոլոր իրեն համար սիրելի առարկաներուն կողմը , զորս վերջալուսային անդորրութեամբ օծուն օսկեճաճանչ բեկբեկումներ բաց պատուհանէն կուգային լուսաւորել . և այդ խաղաղաւէտ պահուն , անբացատրելի զգայութիւններ , իրարմէ աւելի խռովիչ ու անհանգստող , կը ցանցէին իր արդէն զանազան տաքնապներու ենթակոյ վերաւոր հոգին : Հակառակ հանդուրժելու համար ինքզինքին վրայ ըրած մեծ ճիգերուն , այդ բոլոր ցանքերուն ապարդիւն մնալէն նեղութիւն զգալուն էր որ , ընթերցումը նոր սկսուած վէպի մը ընդհատումին մէջ կ'սպասէր անշարժ , միտքը իր ընկերական-անհատական դժգոհ վիճակին իրերայաջորդ դրուագներուն վերջուշումին մէջ մոլորուն : Յանկարծ , իբր թէ զսպանակէ մը մղուած , շուտո՛վ մը գիրքը գոցեց և ոտքի կլկելով սկսաւ մեծաքայլ պտըտկիլ սենեակին մէջ , մօտենալով երբեմն այն մտերիմ առարկաներուն , որոնք երկար ատենէ ի վեր , իր առանձնութեան պահերուն , սարսափէին յուզումներ հաղորդած էին սիրտին . — Մօրը ու պաշտելի քրոջ մը լուսանկարները , — ափսո՛ս յիշատակներ ասո՛նք ալ , — որոնց նայելէ՛ չէր յագենար և որոնց կարօտը քաշած էր ա՛յնչափ տարիներէ ի վեր : Սպէին , պատին մէկ ուրիշ անկիւնը , հոյլ մը ուրիշ պատկերներու վրայ սկսաւ փոփոխակի թափաւիլ հիմա իր նայուածքը , բարեկամներու լուսանկարներ ամէնքն ալ , զորս ա՛յնչափ անգամներ անսաճ էր թէւեւ , բայց իր հոգեկան տենդոտ վիճակին մէջ , միտքին համար տարբեր զբաղումի հաճելի բաներ մը փնտռելո՛ւն էր որ կրկին

աչքէ կ'անցընէր զանոնք, — տկնյայտնի ջգտանութեան մը յստակ տրտաք, աճապարտա զննութեամբ :

Մշտապէս յուզումներու և վրդովումներու ենթարկուած այս հոգին կարելի էր որ բոյսի խաղաղ ու անհոգ կեանքը ապրէր : Իր մտատանջութիւնները, իր լսին տառապանքը որոնք սեւ ու մեկանուշ աչքերուն խորէն բզկեւելով կը տարածուէին ամբողջ դէմքին վրայ՝ դառն արտայայտութեան մը ծաւալումին մէջ, արդէն բաւականէն աւելի պերճախօս էին՝ կեանքէն իր վնասումը մատնելու : Պատանեկան հասակին որը մնացած, և ստիպուած՝ մէկ կողմէն անխիղճ խնամակալի մը գործած շահատակութիւններուն ու զեղծումներուն դէմ պայքարելու և միւս կողմէն իրեն պէս անոք աղջնակ մը — քրոջը աղջիկը — խնամելու, բախտին հարուածներուն տակ, — լախտի՛ հարուածներ, — քաշած էր անարտունջ, ձեռքը մնացած քիչ մը դրամով — վերջին խլիսկը զոր անտիրա խնամակալէն կորուցած էր գրեթէ բռնի — ապրելու և ապրեցնելու համար իր պաշտպանութեան կարօտ մնացած սիրուն, պաշտելի՛ Սիրանուշը : Եւ ահա օր մըն ալ Հայ վաճառատուն մը մտած էր իր պաշտօնեայ, իրականին մէջ սպասաւոր կամ . . . բեռնակիր, — նիհար ամսականով մը ապահովելու համար վերջապէս իր կեանքը : Ինչ ըրած էր հոգ երկար տարիներէ ի վեր, և ինչ եղած, հիմա որ քստնը հինգ գարուններ ուղծուելէ ետքը, կը գտնուէր ընկերային որոշ, թէեւ համեստ դիրքի մը, աստիճանի մը վրայ : Ինչ եղած էր իր դերը, իր նիւթական կացութիւնը, և ինչ պիտի ըլլար իր ապագան : Իր ապագան : Հայ վաճառատունի՞ մը մէջ, Հայ քարթօնի՞ մը թեւին տակ . . . ? : Գոնէ, ալ զապրած էին, իր մէջ, բոլոր լաւատես ու վեհասակար ինքնախաբուծութիւնները, և իրերը իրենց որոշ դոյնին, բացորոշ խօսութեան մէջ տեսնելու միայն փոխարկուած : Այդչափ երկար տարիներու ծառայութենէն ետքը, սա՛ վճռական համոզումը դոյացուցած էր թէ՛ աւելի լաւ էր անձնատպան ըլլալ, քան Հայ ջոռպանի մը անտանելի քմահաճոյքները դոհացնել, անոր սէրին զոհուելով : . . . Այս խորհրդածութիւնները կ'անցնէին իր միտքէն, երբ Արսէն Անմեղեան սոսկումով կը տեսնէր իր կեանքին կարած անցած երկայն անջրպետին զարհուրելի ունայնութիւնը : Ինչ որ իր ցաւը կ'աւելցնէր, զայն մնայուն սոււայտանքի մը վերածելով, մտածումն էր իր արժանիքին անտեսուած ըլլալուն : Ու զիտակցութիւնը՝ աշխարհի մէջ բաղձալուծած բոլոր լաւագոյն բաներուն, — գիրքի գերադասութիւն, անունի հմայք, նիւթական վիպուն վիճակ, և ինչ, — ա՛լ աւելի կը շեշտէր այդ իր արդէն տառապալիքն անձկութիւնը : Եւ կը խղճէր ինքզինքին դէմ, — երկարատեւ ամուլ և տնօգուտ պաշտօնավարութեան մը մէջ, խաւրեցուցած ըլլալուն իր լաւագոյն տարիներուն ծաղիկը : Ինչո՞ւ այդչափ տարիներ խոստումներով, յոյսերով սնած, օրօրուած ըլլար, մինչ ու-

ընչներ , բացարձակապէս անարժէք , արդէն յաջողած էին բարձրանալ :
Բոլոր այս յարաբերական հայեացքները , — ցաւազդէն նկատողութիւններ , — պատճառ կ'ըլլային որ , իր թոյլ ու վարանոտ մարդու անկարողութիւններուն մէջ , արդիականութեան անխուսափելի զոհերէն մէկը համարէ ինքզինքը , իրերու անդիմադրելի ուժէն և միշտ միջակ , կրտսերական զերի մը կառչած մնալու գաղափարաւորածի հիւսնադաշին մտասեւեռումէն հաղածական . . . : Իր ուղեղին մէջ , ամէնօր , անդադար , ցնորունակ զաղափարներու և ուրուագիծերու յաճախանքը , զինքը իր վիժած կացութեան մէջ տեսլի՝ կը ճնշէր՝ և կը սպառնար իրմէ խել , հետզհետէ , իր պայմանադրական օգտախնդրութիւններուն և ինքզինքին համար՝ աղբիւր , ինքզինքին բաւելու ձգտումներուն մինչև իսկ տախտակաւոր նշոյլները . . . : Աշխարհին մէջը տենդայոյզ և արշաւասոյր այն կեանքին՝ զոր արդի ընկերութիւնը ստեղծած էր , ջղազրկիւ ախտավարակութեամբ լիցուն սարսուռներով , իր ներկայութիւնը կ'սկսէր բոլորովին աւելորդ գտնել : Գոհնէ հանդիսատէս մը կ'արեւոր ըլլալ : Վայրկեաններ ունէր որ տեսնելու , դիտելու , դատելու պարագանները իսկ , իրեն համար , նեղացուցիչ ու անհանգստող բնոյթ մը կ'ընծայէին : Ձէր կրնար նայլ՝ առանց խռովելու , գլուխի պոռոյտ զգալու , նուաղելու . . . : Եւ , իբր թէ պահ մը իր հաշիշամուրի երեւակայութեան առջեւէն յուսահատական , արագութեամբ անցնիլ ուղած ըլլային իր միտքը գրաւող ու զբաղեցնող պատկերները , զարուս յաջողած գործի կեանքի հականերուն երկար տողանցումը կ'սկսէր աչքին առջեւէն սահիլ սրբնիմաց վաղքով մը , ջախջախիչ հեգնութեան սոյլ մը ուղղելով իր հասցէին . . . : Ռոքֆէլլը՝ , Քառնէկի՝ , Մուկան , Հէրիմէն , վանտէրպիլթ . . . : Տիտաններու այս շարքին առջեւ , պակուցիչ ու երկիւղած զմայլանքով մը կը լիցուէր իր հոգին , և ա'լ չէր կրնար , ժամերով , միտքէն վանել բոլոր այն բիւրաւոր իրարմէ տարբեր զգայութիւնները և տպագրութիւնները հոգիի ու սիրտի անօրինակ ուրախութիւններուն , զորանիւ թական երանաւէտ կացութիւններ պիտի կրնային երեւք մարդուս ընծայել : Այս զանազան հայեացքները մեծապէս կ'ազդէին Արսէն Անմիջեանի զարմանալի հակասութիւններով լիցուն խառնուածքին վրայ : Ինքը , հակառակ զինքը տանջող բոլոր երեւոյթներուն ու իրողութիւններուն դէմ ընդվզելու փորձերուն , deterministe մըն էր . կը հաւատար պատճառներու , չարժաւորութներու ուժին , Օժտուած՝ արթուն իմաստասեր պատճառներու , չարժաւորութներու ուժին , հաղորդակից այն անհրաժեշտ պայմաններուն՝ որոնք մարդու մը անունին շուրջը ազմուկ հանել տալով՝ աւելի կամ նուազ վաւերական համարելի մը փառապատկը կ'անցընեն անոր ճակատին , և գիտակից , նմանապէս , բոլոր այն միջոցներուն ու կերպերուն , որոնցմով , շատ անգամ , իր աչքերուն առջեւ , տեսած

էր, — հրաշալի՜ ալիսկերպութիւն, — դիրքի «բարեխիտումներ ու ճշ-
խացումներ», Արսէն, իր շուրջը ամէն օր ծփացող մարդկային եռուզե-
ռումին մէջէն մինակ անցած, և իր սեւ աչքերուն լսողական սրտու-
սութիւնովը ու միաքին վառ խորաթափանցութիւնովը զինքը հետա-
քըքրող բոլոր այսօրինակ պատկերներուն և երեւոյթներուն հետեւած
ատենը, դարմանքով, դայրոյթով և զգուանքով խառն գլխացումի մը
փոթորկիլը կ'զգար երբեմն կուրծքին տակ : Որովհետեւ, ոչէ՞տք է
կրկնել թէ, առեւտրական հրապարակը, — ելեւէջներու, անկումներու և
բարձրացումներու այդ պայքարալից լայն կրկէսը, — ուր յաճախ կ'երե-
ւար գործերու բերմունքով, չառ անգամ իրեն ապշեցուցիչ անակնկալ-
ներ վերապահած կ'ըլլար : Իր հանդիպած «օրուան դէմքեր»էն չատերը
կը ճանչնար, որոնք, անցեալին մէջ, խեղճ ու ծուռճիտ տիպարներ
էին, — այսօր՝ ճշմարիտ parvenuի իրենց կերպարանափոխութիւ-
նովը ու դրսերեւոյթովը, զինքը ոտքերնուն տակ ջախջախելու պատ-
րանքը տուող սոնք քալուածքով մը սպառնալիս . . . : Ի՞նչ փոյթ թէ
անհաւատալի պատմութիւններու հիւսուածքէն անբաժան պիտի մնար
ատոնց անունը, ինչպէս իրենց անակնունդի յաջողութենէն . — կը բա-
ւէր որ հարստացած, նախանձելի դիրքերու տէր դարձած էին : Չէ՞ մի
որ ժամանակը, վաղը միւս օր, պիտի կրնար իրենց անունը նուիրա-
գործել ու պանծացնել :

[Յաշուրդով]

ՄԻԶԲԱՆ ՌԻԶՈՒՐԵԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ՎԻՇՏԸ

Ամէն ծաղիկ արիագեղ սիրունին է արեւուն
Որ կը մտնի հոն վարք ծիրանեփայլ ցոլերով .
Տեսէ՛ք ինչպէ՞ս ամէնքն ալ գլուխին կախ . դողդոջուն ,
Կը նշմարեն անոր յամր նեղացումը ակնարով :

Արբուսիքն մը գերացոյն կը քեւածի օդին մէջ ,
Որովհետեւ գորսացոյն մացառներէն սկսեալ ,
Մինչեւ հնուէ , քաւալանջ լեւակները նրբառէջ ,
Կը դնան օծուիլ անոր գաղջ գգուանովը ոսկեհալ :

Բայց երբ մաքր կ'ստուերէ հորիզոնը անասնման
Ծաղիկները միամիտ կը կարծեն թէ արեւնին
Ա՛յ մեռաւ . ու իրենց գիրգ հոգիները սրտագին

Կը սարսառն հոգին մէջ , եւ մինչեւ լոյս , լո՛ւս , կուլան
Երկինքին սակ անարեւ . ա՛յ է պաշտառք որ արդէն
Ամէն առօր արցունքով բաժակներնին լեցուն են :

ԱԼՊԷՌ ՍԱՄԷՆ-Ի

ՊԵՐՃՈՒՅԻ ԵԱԶԸՃԵԱՆ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր Ը

(Պ Ա Տ Կ Ե Ր)

Հայտարար-Փաշայէն մեկնող առտուան շողենաւին մէջ : Դէմս զոյգ մը պզտիկներ : Իրենց մանկական ծիծաղներով կը կատակեն իրարու հետ : Երբեմն կը խօսին և երբեմն կը կարդան հատուած մը իրենց դասագիրքէն : Մանչը, ութէն տասը տարու, աւելի լուրջ երեւոյթ մը ունի, քան աղջիկը, որ նոյն տարիքը ունենալ կ'երեւայ ևս սակայն վառվռուն է իր շարժումներուն մէջ և հասուն ու խելանի է իրա՛ւ, մանաւանդ անոր համար որ, թէ կ'զբաղեցնէ շուրջինները, եւ թէ կը զբաղի ինք ուրիշներով, Նայուածքին մէջ իրերու լուրջ ճանաչողութիւն մը ևս գիտակցութիւն մը կը փայլէ և իր խնդուքին, կատակելուն մէջ անսովոր անուակութիւն մը : Մանչը՝ հակառակ իր համարերու հաճոյակատարութեանը, յայտնի նեղսրտութեան նշաններ կը ցուցնէ ու կ'աշխատի լռեցնել, հանդարտեցնել իր ընկերուհին, որուն շարժումները ևս կատակելու միջոցները հետզհետէ աւելի հետաքրքրական կը դառնան, իրենց չարածձի յղացումներով ու սրամտութիւններով : Տղան կ'աշխատի միշտ խուսափել անոր ընդմիջումներէն ու զլխիկոր կը կարդայ ձեռքի գիրքը. իսկ միւսը, խաբսեալ աղւոր աղջիկը, միշտ նոր թափով մը խանդաւորուած, եղած արդեւքէն կը զբոստի յայտնապէս ու միջոցներուն ամէնէն անօրինակը կը դործադրէ աղուն գլխուն, անոր ուշադրութիւնը աւելի իր վրայ դարձնելու, անոր հանդարտ նստուածքէն բոլորքած գայն խուսկելու, յուզելու և իր կարգին իր հաճոյքին հպատակեցնելու յայտնի ճիւղերով : Դա՛ռն մանւրանկարը իրական կեանքին :

Հէ՛ք աղջիկ, դպրոցականի մատաղ զգացումներովդ կը մղուիս զո՞նկ ընկերովդ լուրջ ու ոչխատասէր հակումները : Անգիտակցօրէն կը պահանջես որ գերիմանայ ան՝ քու բոլոր քմահաճոյքիդ և ժամանցի միջոցդ ըլլայ : Այսօրուընէ, կարճ ընկերակցութեան մը միջոցին, կը միտիս ասա՛նկ վարուիլ ընկերովդ հետ : Հասկա լա՛ղը, երբ զգացումներուդ մէջ անդուստ, պահանջումներուդ մէջ խրոխտ, ետամուռ դժուարահաճ, ինչէ՛ր պիտի չընես, ի՞նչ փորձութիւններու, ի՞նչ թակարդներու զո՞ պիտի չուզես ընել խեղճ ընկերակիցդ : Ու հէ՛ք մարդը, իր տկարութենէն, թէ անծանօթ զգացումէ մը մղուած, պիտի հետեւի կուրօքէն ամէն քայլիդ, պիտի տառապի սրտս մը հաճոյքին համար, պիտի զո՞նէ ինքզինքը, քեզ երջանկացած տեսնելու իտէսլով. և պիտի դայօր մը, դժբախտ վայրկեան, ուր լքուած պիտի դանէ ինքզինքը, մէկ ակնարկիդ, մէկ քմիծաղիդ արժանացած չըլլալու խենթ մաճումով :

Շողենաւը կամուրջին մօտեցեր է, երբ կ'սթափիմ լուռ մտածումներէ : Չեմ կրնար զսպել ծիծաղ մը՝ երբ աղւոր ու գրաւիչ զիմադիծերով կրակոտ աղջիկը, ուժով մը պլլումը տղուն մէջքին, այս անգամ ամուր կիւրպով կը սեղմէ անոր վիզը, գրքակալին կաշիէ զօտիովը, իր բրածին վրայ ա՛լ չկրնալով զսպել խնդուքը, որ կը պոռթկայ կոկորդէն, սլանալով հեռուն :

Իր կնոջական խելայեղ քմահաճոյքներուն վերջինն էր արդեօք :

ՌՈՍԱՆ ԽՈՍՐՈԿ

ՊՈԼԵՍԻ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԳ

Բ.

Երբ լեզուական նախընթացներու և մանաւանդ ուղիղ տրամաբանութեան հետեւելով, համաձայնութիւն գոյացուի, որ Արեւմուտքի Հայերուն համար գոնէ, իբր հայ ազգային լեզու (idiome) ընդունուելիքը, պէտք է ըլլայ Պոլսի աշխարհաբարը, որ այսօրուան գուտարաբարաւներուն (dialectes) ամենէն ծաղկածը ու զարգացածն է, այն ատեն զրուած լեզուին մէջ միօրինակութիւնը բացարձակապէս կարենալ հաստատելու համար, ա'լ ուրիշ բան չը մնար ընելիք, բայց ԼԹԷ զատել, զտել և իր հարազատութեանը մէջ երեւան բերել այդ աշխարհաբարը, որ, ինչպէս նախորդով կ'ըսէինք, տակաւին շատերու կողմէ կը գրուի խառնակ ու անհարազատ կերպերով: Բայց ինչպէ՞ս և ո՞ր եղանակով պէտք է կատարել այդ զատումը, զտումը: Ո՞րքէ և ի՞նչ սկզբունքով պէտք է քաղել Պոլսի աշխարհաբարը բնորոշող օրէնքները, կանոնները: That is the question: Պէ՞տք է դիմել ժողովուրդին, որ միակ հեղինակը ու սերն է լեզուն: Ասիկա տեսականին մէջ առարկութիւն չը վերցնող ճշմարտութիւն մըն է Թէ՛, բայց գործնականին մէջ խնդիր է գիտնալ Թէ՛ ի՞նչ հասկնալու ենք ժողովուրդը ըսելով Լեզուարանական առումով ժողովուրդը (Peuple) կը կոչուի նոյն ազգութեան պատկանող և նոյն լեզուն խօսող համայնքի մը անուս, անգրագէտ (illettré) դասակարգը: Այս դասակարգին կ'ակնարկուի, երբ լեզուն ժողովուրդը կը շինէ, ժողովուրդը կը յիշուի և ինչ, կ'ըսուի: Իրաւ ալ այս անգրագէտ դասակարգն է որ կ'ստեղծէ, կը յորինէ լեզուն: Ետքէն՝ տարիներու, դարերու ընթացքով, ժողովուրդին մէջ կը կազմուի ուրիշ դասակարգ մըն ալ, — ուսեալներու, գրագէտներու (lettrés) դասակարգը, — որ անգրագէտ դասակարգին ստեղծած, յօրինած լեզուն կը ներկայացնէ բերականական կարգի, շարքի տակ զրուած: Այս կերպով ժողովուրդին մէջ երեւան կու գան երկու ան-

շատ դասակարգեր. Ա. — Անգրագէտներու դասակարգը (les illettrés) որ ո՛չ կը կարգայ, ոչ կը գրէ, այլ միայն կը խօսի. Բ. — Գրագէտներու դասակարգը (les lettrés) որ ո՛չ Թէ միայն կը խօսի, այլ նաև կը գրէ ու կը կարգայ: Ժողովուրդին ասանկ դասակարգերու բաժնուիլը, ինչպէս յայտնի կ'երեւայ, ետքէն տեղի կ'ունենայ, բանի որ լեզուին դեռ նոր ստեղծուած, յօրինուած ատենները, զայն ստեղծող, յօրինող ժողովուրդին համար գիր ու զարուծիւն դեռ գոյութիւն չ'ունենալով, իր մէջ չ'էր ալ կրնար գրագէտներու դասակարգ մը գոյութիւն ունենալ: Լեզուի մը ծագումին, ստեղծումին ատենները ուրեմն, ժողովուրդին մէջ ուսեալի անուսի, գրագէտի անգրագէտի դասակարգութիւններ չ'են կրնար գտնուիլ և նոյն ատեններու ժողովուրդը կազմող անհատներուն ամէնքն ալ բնականապէս անուս, անգրագէտ կ'ըլլան: Լեզուներու ծագումին, ստեղծումին ժամանակակից եղող ժողովուրդներու այս բնական տգիտութեան, անգրագէտութեան պատճառով է որ լեզուն շինողը, ստեղծողը, ժողովուրդը՝ զգէ՛ս, ակնռ, ռաւիկ, ակնգրագէ՛ս ժողովուրդն է, ըսուած է և կ'ըսուի: Անուս, անգրագէտ ժողովուրդը սակայն, լեզուին հոգին կամ կմակըր—բերականութիւնը—միայն կ'ստեղծէ, կը յօրինէ, օժտելով նաև զայն այնչափ բառով ու բացատրութիւնով, որչափ բառի ու բացատրութեան անհրաժեշտօրէն պէտք ունի իր գաղափարները դիմացիին հաղորդելու, հասկցնելու համար: Այսպէս ժողովուրդը, օրինակի համար, ճայն բառը ստեղծելէն ետքը, ճայնի գաղափարը տուող ամէն բան անով կը բացատրէ և անխափր կ'ըսէ. փոքրիկին ճայնը, քոչուրնին ճայնը, ոչխարին ճայնը, գործին ճայնը, գեթին ճայնը և այլն և այլն, առանց պէտք տեսնելու ճայնի այս տարբերութիւնները յատկանշող տարբեր բառեր ալ ստեղծելու: Երբ ինք ճայն բառով իր մտքը կը յաջողի բացատրել, ադ կը բաւէ իրեն. բացատրութեան ալ աւելի նուրբ երանգներ փնտռելու պէտքը չ'զգար, ոչ ալ կարեւորութիւն կու տայ անոնց: Բայց ինչ որ անգրագէտ դասակարգին սամանական պէտքերուն կը

բաւէ , չը կրնար բաւել զրազէտ գասակար-
զին՝ որ, ինչպէս տեսանք , կը ձեւանայ
սուաջ կու գայ , քաղաքակրթութեան հետ ,
տարիներու , դարերու թաւալումով Դրազէտ
դասակարգը իր բարոյական ու մտաւորական
շատ աւելի մեծ զարգացումին պատճառով ,
պէտք կ'ունենայ , անգրագէտ դասակարգին
պէտք ունեցած բառերէն ու բացատրութիւն-
ներէն շատ աւելի բառի ու բացատրութեան
Այնպէս որ զրազէտ դասակարգը ա'լ չը գո-
հանար ամէն ժաշկի ժաշկ ըսելով և կ'ըսէ .
փոքորիկին գոռումը գոչումը , թռչունին
գեղգեղը զայլայլը , գետին շաչիւնը շաւա-
չիւնը , ոչխարին մայիւնը , զորտին կլա-
փիւնը կայլն , և այլն , ինք շինելով , յար-
մարցնելով և կամ փոխ առնելով բոլոր այս
բառերը , կը շինէ , կը յարմարցնէ կամ փոխ
կ'առնէ նաեւ բացատրութիւններ ամէն ան-
գամ որ զանոնք չը գտնար ժողովուրդին
ստեղծած , յորինած լեզուն մէջ Դրազէտին
այս բառերը , բացատրութիւնները կը հարս-
տացնեն , կը նոխացնեն ժողովուրդին
ստեղծած յորինած լեզուն : Անոնք միւսերը
կ'ըլլան ժողովուրդին կերտած կմախքին : Կը
հետեւի ուրեմն , որ լեզուն հոգին կամ
կմախքը — քերականութիւնը և առօրեայ
խօսակցութեան անհրաժեշտ կողմ բառերը և
բացատրութիւնները — ստեղծողը , յորինողը
ժողովուրդին անգրագէտ դասակարգն է . իսկ
զրազէտ դասակարգը հիմ ունենալով այդ
կմախքը կը պծնէ , կը զարդարէ զայն , անոր
վրայ աւելցնելով , իր կողմէ միայն գործած-
ուելու սահմանաւած , զրական (littéraire) նոր
նոր բառեր ու բացատրութիւններ : Այս կեր-
պով ըով ըով կ'ունենանք անգրագէտներուն
խօսած և զրազէտներուն գրած լեզուները ,
որոնց երկրորդը թէեւ բառերով ու բացատ-
րութիւններով շատ աւելի ճոխ ու հարուստ է
քան առաջինը , բայց անոնց երկուքն ալ
կատարելապէս մէկ և նոյն են իրենց հիմ-
նական , էական — քերականական — օրէնքնե-
րուն , կանոններուն մէջ :

Ասիկա ճշմարիտ չ'է սակայն Պոլիսի այս-
օրուան խօսուած և գրուած աշխարհաբարե-
րուն նամար : Պոլիսի ժողովուրդը թէեւ ստեղ-
ծեր յորիներ է Պոլիսի այսօրուան աշխարհա-
բարին հոգին կամ կմախքը — քերականու-

թիւնը — բայց զրազէտ դասակարգին գրեթէ
մեծագոյն մասը նկատի չ'է առեր զայն , հա-
ւատարիմ չ'է մնացեր անոր , հեռացեր ու-
ժացեր է անկէ , իր զրուածքներուն մէջ մոցնե-
լով Պոլիսի աշխարհաբարին կանոններուն ,
օրէնքներուն օտար , խորթ կողմ զրաբարի կամ
տարբեր զաւտարարատներու օրէնքներ ,
կանոններ : Սխալ , բացարձակ սխալ է ուրեմն ,
Պոլիսի այսօրուան աշխարհաբարին հոգին՝
քերականութիւնը , այս զրազէտներուն կամ
անոնց հետեւողներուն գործածած պայմա-
նադրական շինուած , անհարազատ , լեզուն
մէջ փնտռել : Պոլիսի այսօրուան աշխարհա-
բարին հոգին՝ քերականութիւնը , պէտք է
փնտռենք նոյն իսկ զայն ստեղծող յորինող
անգրագէտ ժողովուրդին խօսած լեզուն մէջ ,
ուր կատարած մեր պրպտումներուն վրայ
պիտի խօսինք յաջորդով :

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷՆԱՆ

[Փաստաբան]

Ջուաբք անակնկալ մը պիտի ըլլայ
ապահովաբար Մասիսի ընթերցող-
ներուն , գաւառացի միւսքի մը հե-
տեւալ երգիծական նամակը ,
զոր կը հրատարակենք իբր իմ-
նասիպ էջ մը գաւառական քա-
րակցութեան , — լուսաւորէն առա-
ջինը և միակը , իր սրամիտ յու-
ցումովը :

ԳԱԽԱՌԱՑԻՆ ՆԱՄԱԿԸ

Խ Մ Ր Ա Գ Ի Ի Ի Ն

Ա.գնիւ ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

Սիրելի՛ բարեկամ , բարե՛ւ ! :

Դրիչի մարդիկ ծանօթներէ աւելի ան-
ծանօթ բարեկամներ կ'ունենան : Ուրեմն մի
զարմանաք երբ նամակս չորուն տեսակէն
բիշ չէ որ կ'ընդունիք ամէն շաբթու ամե-
նայն համբերութեամբ : «Սիրելի բարեկամով
կ'սկսիմ , քննի որ դուք տեսած չունիք իմ
«Ժակ փանթալոն» և ես ձեր երկար մա-
զերը օր լրոյ» միայն . . . տեսած եմ . և
ոչ ալ , օր մը Մասիսի իմբադրատունը
առած ունիմ շունչս կամ . . . սուրմ մը :

Այսպիսի իբր յառաջարկն :

Մտացած : Օ՛հ . այդ իսկ է ինչդիրը : Խնդրեմ լսեցէք : Օրին մէկը որոշեցի . . . զրազէտ ըլլալ : Այդ այն երանելի օրն էր երբ շարադրութեան ուսուցիչիս մէկ զովեստը լսեցի զրուածքիս մասին , որուն մէջ բացի հեղինակութենէ ամէն բան կարի խնդմարդը չկրցաւ հասկնալ և ընկերներս բերանարաց մնացին : Միամիտները : Անաչառ ըլլալու համար ըսեմ որ՝ տակէ ետքը սկսայ շարադրութեան շատ հոգ տանիլ , առջի կեփե՛ն չկորսելու համար : Պէտք է՛յն ըսելու որ ա՛լ զլագէտ մըն էի , ինչպէս կը տեսնէք : Եւ անկէ ետքը Դուբեա՛նը , անմահ Պետրոսը , ա՛խ , ինչե՛ր քաշեց ձեռքէս : Քիչ մնաց որ անոր բոլոր տաղերը կրկնեմ հոս : Ու կ'երգէի , կը զրէի եւ ալ իմ կարգիս : Ո՛հ , ա՛հ , առուակ , վտակ , լոյս , բոյս , կոյս , յոյս , բոյր , թոյր , քաղցրիկ , ծաղիկ , համակ , վերակ , Աստուած իմ , ի՛նչ զիսնամ , բանաստեղծական բառարանին բոլոր բառերը մաշեցան զրիչիս տակ , ծաղիկները թարշամեցան . և զեփիւռը ու հովը սկսան փչել զրիչէս զլուսկամ զլսէս զրիչս , ինչպէս որ կ'ուզէք : Ու բանաստեղծ էի , աւելորդ է ըսել : Բանաստեղծ՝ ամբողջ մարմնովս : Շուրջս ամէն ինչ զոեհիկ ու տափակ կ'երեւար : Ամէն շունչ կը յուզէր զիս : Մարդիկ զիս չէի՛ն ըմբռներ : Անկարելի էր որ հասակակից պատանիներս իմ արժէքս ունենային : Անոնք ո՛ր . Է՛ս՝ ուր : Ես տաղանդ մըն էի բացարձակապէս : Ուրիշ մը ինծի չափ զգայո՛ւն . կարեւր՞ էր աղ : Կը զարմանայի թէ ի՛նչպէս ամէն իրիկուն վերջալոյսին բոլոր մարդիկ չէին երգեր , չէին դիտեր արեւը «որ զերդ հզօր արծիւ իր թեւերը կ'ամփոփէ ու կը հանգչի իր սիրատարի սիրուհիին ծոցը — ծովը» : Ի՛նչպէս կ'ըլլար որ արշալոյսը ու գիշերը , լուսնեկա՛յ գիշերը , կը մնային առանց երգիչի : Եթէ ես ալ չըլլայի՛ . . . Ոսկեբամպակ ամպե՛րը , նուաղկոտ ! ամպերը զգուեցա՛ն իմ յառումներէս : Լուսինը , հազա լուսի՛նը , ինչե՛ր չըտաւ . ծաւառանքը , մարգերը , սոխակները , ա՛հ սոխակները [տխած չունիմ կեանքիս մէջ] ո՛րքան ականջ դրին իմ տրոփումներուն : Անոնք միայն զիս կը հասկնային [այս «գիս»ը

քանի՛ հարիւր անգամ «ինձ» է եղած . հասար տառախախները] : Անշուշտ համոզուեցար որ ալ բանաստեղծ էի : Կը կարդայի բանաստեղծութիւննե՛ր , կը մտածէի բանաստեղծութիւն , կը զրէի բանաստեղծութիւն , կը անէի բանաստեղծութեամբ : Կ'ուզէք նէ հաւատացէք : Կը մնար մէկ բան , զրուածքներս-հրատարակուած տեսներ : Աս արդէն ա՛յն տեսակ երջանկութիւն մըն էր , որուն հաւար հոգի կու տայի . [եթէ խօսքս բռնէի այսօր է՛ն քիչ երեսուն անգամ մեռած էի , և վա՛ն պիտի զրկուէր իր մեծագոյն բանաստեղծէն] : Սակայն որչափ որ վրաս ա՛յսպիսի համարում ունէի , երբեք չէի կրնար համոզուիլ սա ճշմարտութեան որ՝ իմ ծանօթ զրագէտներս ինծի պէս մարդիկ ըլլային , թէ և իբր ապացոյց ունէի Դուբեանի և ուրիշներու լուսանկարները : Անանկ կը կարծէի որ անոնք լրագրիի մէջ հրատարակուած անձը գոնէ քիչ մը տարբեր ըլլալու էր մեզմէ . եթէ ոչ ի՛նչ կ'արժէր : Սիպիլը սանկ սովորական կնո՞ջ դէմքով , Նդիան , Զօհրապ , Հրանտ Ասատուր , Մովսէսեան և Ենովք Արմէն , ինծի վարժապետի՞ս պէս , լուսարարի՞ն պէս , մեր թաղականի՞ն պէս մարդիկ . օ՛հ աղ սրբապղծութիւն էր : Ո՛չ : Ես ալ որոշեցի անմահ ըլլալ ու զրիւ . . . Մասիսին : Ա՛լ որոշուած էր : Սկսած էի ինքզինքս մեծ զգալ որովհետեւ նամակ մը պիտի գրէի . . . Ենովք Արմէնին . ի՛նչ գրէի . ի՛նչ ընէի որ առաջին անգամէն զօրաւոր հփե՛մը ընէր : Սկսայ : Նախ , բնական է , խօսելու էի իմ զրական ըմբռնումներու վրայ , այնպէս ենթադրելով որ Ենովք Արմէնը դիմացս նստած ինծի կը նայի և կ'ուզէ իմանալ ինչ այստի մարդ ըլլալս [ինչպէս որ . նամակս մինչեւ հոս կարդալով հասկցաւ !] : Պէտք էր նիշէի աստիճանները սիրտիս աղաղակներուն , սիրտյս գալարումներուն և հոգիիս գոռումներուն [եթէ Ենովք Արմէն չլիսնար] : Պատմէի երազներս , յոյզերս , դաւաճիս ու զրաւ կանոնեան անհուն ծարաւս [ո՛վ երաշտութիւնը միտքին] : Սակայն մոռցա՛յ , նախ պէտք էր քանի մը պատշաճ գոռոյիւնաններ ընէի Մասիսին , որ անշուշտ պատուական է , չնաշտարհի՛կ , որ իր խմբագրական նոր կազմակերպութենէն իվեր աննախըմաց

փայլ մը, գեղեցկութիւն մը, համբաւ մը ստացած է և իր շուրջը հաւաքած Թրքահայ զրական ժողովներն ։ Յայտնէի թէ **Մասիս** խմբագիրին պարբերական նուէրները ինչքան հասելի անակնկալներ էին իր կանխիկ բաժանորդներուն և սանկ նրբամտօրէն հասկցնէի թէ՛ այդ նուէրներէն ինչպէս և ինչո՞ւ [ո՞ր ինչո՞ւ] գուրկ են անոնք որ . . . պատիւը ունին **Մասիս**ը . . . նուիրաբար կարգալու . արդեօք (« . . . սոսկ բաժանորդ մ'ալ չարժեր—մեր տխրոյր . . . նուիրառուի ») (հասկցողին շտա բարեւ) : Ալփաւլան, ո՞ւր էս ։ Վերջապէս, երբ կը յուսայի թէ արդէն լաւ արամադրութիւն մը կազմել տուած եմ վրաս [խիղճովդ ըսէ՛ ! Ե. Ա.] խոնարհաբար պիտի առաջարկէի հրատարակել **Մասիս**ի էջերուն մէջ [« ազնուաբար խոնարհ անկիւն մը շնորհել » պէտք էր ըսէի] միտքիս այն քանի մը ծնունդները, հայ զրականութեան սիրուն և քաջալերութեան համար գաւառացի խոտմառից ? պատմելի մը, որ այդ զրական հաստատման համար օխաներով քարիւղ և քրտինք է ապրտած, քանի մը վրձին պէս փետտած [չունեցածէն] տառապած, անոնց ամէն բառերը տպւած [խորունկ «ո՞ն մը կայ հոս] և որոնց մէջ դրած է իր « բովանդակ տաղանդը, կորովը և . . . տախտակութիւնը ») [դեռ կրնայ շարունակուիլ] :

Զգացում ու թռիչ չունեցող հոգիներուն համար նամակիս ընթերցումը . . . հեղինակին վերապահուած է ! ? :

Նամակիս բովանդակութիւնը որոշած էի . կը մնար անոր ձեւը կամ հարեղիկական մասը ։ Այո՛, երեւոյթ մեծ ազդեցութիւն կրնար ունենալ ինծի Արմէնի վրայ ։ Նոյն խորհեցայ ոսկեզօծ Թուղթ առնել . Թերթը 10 փարանոց շիշ մըն ալ ոսկի մեղան՝ 5 դրշ . ։ Տուի մըն ալ լաւ գրչածայր առի և միտքս բերի գիրի ուսուցիչիս սորվեցուցած բոլոր գեղեցիկ գիրերը, նրբագիր, ճակատագիր, գոթագիր ևն. ևն ։ Անանկ մը պիտի գրէի որ ձեռք մնար սա մարդը, Եթէ Թուղթը վարդազոյն ըլլա՛մ, աւելի լաւ չէ՞ր բացատրեր սիրտիս յոյզը և սէրը . — սիրոյ լեզուով էս այսպէ՛ս եմ ուսեր [սա նամակիս տէրը

չեղլայ՝ կարծէ թէ իրեն . . . զարնուած եմ !!!] Այդ օրը այդպէս անցաւ . գիշերն ալ երազեցի՛ : Յաջորդ օրը միտքս ինկաւ որ զրական մեծ մարդիկ տգեղ կը գրեն . էս ալ մեծ զրական մարդ եմ ։ Ուրեմն՝ տգեղ գրեմ. մարդուր . տղայական կ'ըլլայ, զատարկ-զլուխ մարդու գործ ։ Թո՞ւղթ . . . Ան ալ փոխելու եմ ։ Այնպէս ցուցնելու եմ թէ այդ նամակ գրելը ա՛յնչափ կարեւոր բան մը չէր ինծի համար . թէ սանկ պատահաբար ձանձրոյթիս մէկ պահուն նիշած եմ զայն ։ Այո՛, այո՛, այդպէս պէտք էր ։ Դրական մեծութեան գիտակցութիւնս՝ անտառութեան հով մը դրած էր մէջս, որ փրցի պէս միշտ կը փշար ։ Անանկ մը պիտի գրէի որ սա նիւով Արմէնը չարաբար էր կարգացած ժամանակը և զրաշարները յուսահատելիս Դրական մեծ մարդիկ տգեղ կը գրէին։ Տեսած էի Մովսէս Եանի, Քէչեանի ևն՝ զրութիւնները ։ Երբեք չէի լսեր ձայնը մէկ ուսուցիչիս որ կ'ըսէր . « Դրական մեծ մարդիկ տգեղ կը գրեն, բայց ամէն տգեղ գիր գրողը՝ մեծ մարդ չէ ։ Որո՞ւ կ'ըսես : Այլ երթա՛ր բարով ոսկեզօծ Թուղթ . ոսկի մեղան և մաքուր գիր :

Մեր ժամանակին զարգացած մարդիկ ֆրանսերէն բառեր կը գործածէին գրութեան մէջ. էս ալ որոշեցի ատանկ ընել : Բացի բառարանը և . . . հասած տեղը ։ Որպէս զի խմբագիրս զիս իր *ձեռնյոյճեմ* մարդ ընդունի, անգլերէն բառեր ալ պէտք էին . օր րաջր . բու պի օր մա՛ք . . . իւմըր . *skep* իդ *she* փուէշըն ևն. սկսայ աման աման ապառել ։ Կը մնար մէկ բան . — ստորագրութիւնը, ծածկանունը . *tout est là* ։ Ստորագրութիւնն էր տեսած էի որ բերնիս ջուրերը կը վազցնէին ։ Ինծի համար անլոյծ կը մնար սա խնդիրը թէ՛ ինչպէս ոմանք այնչափ պարզ կերպով կը գրէին անունին ։

[Խմբ. Ծան . — Քանի որ ա՛յսչափ զուարճալի կը խօսի մեր . . . սովաւախօս բանաստեղծը, ա՛յնչափ որ ալ տեղ չմնաց իր յորուածին վերջարանին **Մասիս**ի մէջ, միւս կէսին՝ ընթերցողները Թող ապասեն . . . յաջորդին] :

Գրելի կ'ըլլայ 15 պատասխաններ գտնել, սապէս. —

Ա. Տեսակ գիւնի	Բ. Տեսակ գիւնի	Գ. Տեսակ գիւնի	Դ. Տեսակ գիւնի	Ե. Տեսակ գիւնի	Զ. Տեսակ գիւնի
1 Պատ.	4 քիւօ	30 քիւօ	10 քիւօ	8 քիւօ	8 քիւօ
2 »	12 »	22 »	10 »	10 »	8 »
3 »	22 »	12 »	10 »	10 »	10 »
4 »	14 »	20 »	10 »	8 »	10 »
5 »	16 »	18 »	10 »	8 »	8 »
6 »	26 »	8 »	10 »	8 »	10 »
7 »	24 »	10 »	10 »	10 »	8 »
8 »	30 »	4 »	8 »	10 »	10 »
9 »	22 »	12 »	8 »	8 »	10 »
10 »	12 »	22 »	8 »	8 »	10 »
11 »	20 »	14 »	8 »	10 »	8 »
12 »	18 »	16 »	8 »	10 »	10 »
13 »	8 »	26 »	8 »	10 »	8 »
14 »	10 »	24 »	8 »	8 »	10 »
15 »	34 »	34 »	18 »	18 »	18 »

Գրնիները եթէ այս համեմատութեամբ իրարու հետ խառնուին, ուղ-
ուած խառնուրդը կը կազմուի. կեղծ դրութեան կանոնով լուծելու
համար ամէն տեսակ գրնիէն որ և է հաւասար քանակութիւն մը՝ օրի-
նակի համար տասնական քիւօ առնել. խառնուրդը կ'ըլլայ 60 քիւօ եւ
կ'արժէ 3440 փարա, մինչդեռ մեր ուղած պայմաններով 60 քիւօն
պէտք է արժէ 3600 փարա, այսինքն 160 փարա աւելի, որով, եթէ
միջին գրնէն բարձր գրն ունեցող գրնիներու քանակութիւնը պատշաճ
քանակութեամբ աւելցուի և վար գրն ունեցողներունը պակսեցուի,
պայմանով որ խառնուրդը միշտ 60 քիւօ մնայ և սակայն 160 փարա
աւելի արժէ, խնդիրին լուծումը գտնուած կ'ըլլայ. այսպէսով ալ շուտ
մը պատասխաններ կրնան գտնուիլ: Պատասխաններուն ամբողջական
թիւը գտնելու համար պէտք է խնդիրը նկատի առնել գրահաշիւով.
Ենթադրենք թէ արուած պայմաններով 100 քիւօի խառնուրդ մը կազ-
մել ուզուի և ասոր համար 6 տեսակ գրնիներուն ամէն մէկէն ք₁, ք₂,
ք₃, ք₄, ք₅, ք₆ քանակութիւնները առնուին: Բնական է որ ք₁,
+ ք₂, + ք₃, + ք₄, + ք₅, + ք₆, = 100 պիտի ըլլայ և այս
խառնուրդը 70 ք₁, + 68 ք₂, + 56 ք₃, + 52 ք₄, + 50 ք₅, + 48 ք₆,
= 160 + 60 պիտի արժէ: Այսպէսով միայն երկու հաւասա-
րութիւն կազմել կարելի կ'ըլլայ, մինչդեռ անձանօթներուն թիւը 6 է.
Ատոնցմէ չօրսին արուած որ և է պատշաճ արժէքներուն համեմատ միւս
երկուքն ալ մէկ մէկ արժէք կ'առնեն. ըսել է խնդիրը անորոշ (indé-
terminé) է եւ կրնայ անհոուն քիւնով պատասխաններ ունենայ:

Դրկուած 5 պատասխաններէն լաւագոյնն է Հ. Ս. Տ. ստորագրուած թիւնը [*] կրողը՝ ուր խնդիրը լուծուած է կեղծ դրութեան օրէնքով և յիշուած միանգամայն թէ՛ խնդիրը կրնայ չատ մը պատասխաններու նկնալ : Խնդիրը լուծած է նաեւ (խառնուրդի կանոնով) Պրն. Օննիկ Յ. Աջճեան, սակայն միայն 1½ պատասխաններ տուած ըլլալով չի կրնար յաջողած նկատուիլ : Իսկ միւս 3 պատասխանները թերի են :

Պ. Պ. ԱՏՐՈՒՆԻ

[*] Կը խնդրուի Հ. Ս. Տ. Էն յայտնել իր ինքնութիւնը կամբազրու-
թեանս , տիրանալու համար խոստացուած վարձատրութեան :

«УУ.УтУ»т һУР.

Յրանաացի՝ ուսուցիչ մը, հմուտ ֆրանսերէն լեզուին, առողջա-
նութեան և իօսելալարժութեան, պատրաստ է դասեր աւանդելու
մասնաւորներու և փափաքուած տուններու մէջ: Դիմել խմբագրութեան
և օգտուել այս բացառիկ առիթէն:

ՏԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ . — Վերաբուժ-Ատամնագրութ Սահակ էֆ. Գան-
ճեան կը ծանուցանէ իր բաղմամբ յաճախողներուն թէ՛ իր Բերաթ
աշխատանոցը փոխադրած է Մեծ-Փողոց , Սանթա-Մարիա եկեղեցիին
դիմացի թիւ 414 արարքըմանը, ուր կ'ընդունի իր յաճախողները ամէն
օր կէս օրէ ետքը , իսկ Գաաը-Գէօյ իր բնակարանը առաջուան պէս
մինչև կէսօր միայն :

ԿԱՅՈՐ ԱՅՏԵՐ

Կաղմով վատառողջ, ջիզերով տրեկար,
Մեծ ու փոքրերուն յաւէտ օգտակար,
Բուսիչ, շաղութիչ դեղ մը անուանի
Եթէ կայ՝ ձկան գուռ իւղն է անի .
Եւ հրաշագործ ալի ձուկն է Մօռիչն
Իր իւղն քմիկողը կը դառնայ կորիւն :
Կուտայ ակորժակ ուժ , քուն , և խկոյն ,
Կարծրին այտեր խնձորի հանդոյն :
Բայց աւաղ որ իւղին այդ Մօռիւ ձրկան ,
Անխաղախը՝ հօտ ծախողներ քիչ կան . . .
Լաւագործն անսահման անոր , քաղցրահամ ,
Ծուկտի եղբերէն չիտակ , այս անգամ ,
Բերել տուած է Լեւոն Կիւմիւշեան ,
Որ՝ քնիթացքին մէջ մօտակալ ձմրան ,
Իր դեղադրանի յալի գան , առնին ու լորմեն :
Ուղղածնուն հալի գան , առնին և լորմեն :
Եւ—ինչպէս ամրան հեղձութիւն տաքուն
«Միջոցառում»ով դրամած անուշ քուն—
Զմրան ցրտաշունչ խիտ օրերուն ալ
Կարեանն առողջ կենցաղ ունենալ .
Եւ միշտ ստիպուին միայն դիմելու ,
Առ Լեւոն Կիւմիւշեան Ի Չարչը—Գառու :

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵՍՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ, ՄԷՕԻԽՐՏԱՐ ճԱՏՏԷԱԻ .

Յրդ Տարեցում

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոնային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելալարժեքեամբ (բռնաբիւ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեւքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ : Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ : Բանակցութեան համար զիմեւ վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին : Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5էն 9 զիմեւով «ԳԱՐՈՒՆ» Գրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 : Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր :

Հիմնադիր-Տնօրէն

Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԱՓՈՍԹՈԼԻԲ ԻՆՍԹԻԹԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԷՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով դուլէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'աւանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաեւ ընտկան, ընտպատմական, ուսողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական գիտութիւնները : Մեծ խնամք կը անցնի աշակերտներու բարոյայան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան : Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասախօսէ առողջապահական և ընտկան գիտութիւններ և ձրիապէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները, եթէ գտնուին : Գիշերօթիկներու տարեթոյսին է 10 Օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի կանխիկ և իրաւ կէսը Ծնունդին : Մանրամասն տեղեկութեան համար զիմեւ Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Գանիա :

“ՄԱՍԻՍ”, Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաւաններու համար տարեկան 60 զրշ.:

Արտատահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները.

միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կա՛խիկ է :

Զննարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ”, Ի Հասցեով

Պապը Ա.Լի շասէտի, Թիւ 38

درعاليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ « ماسيس » غزته سى اداره خانه سى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Ե Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձուցուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարզներուն և խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ընկնալով մարմնամարզի ամէն տեսակ դործիքներ, վերջին դրութեանց համոճայն :

“ՄԱՍԻՍ”ի վեցամսեայ Երջանի հաւաքածոն, որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, կրնայ ստացուիլ իմբագրութենէս, կանխիկ փոխարժէքով՝ 30 դր. : Կազմուած 35 : Թղթատարով դրկուելիք Հասոյնեալ համար պէ՛տ 5 դր. աւելի վհարել :

Դպրոցներու վերաբայումին՝ աղոց ձեռքը ընկիր յասագիրքեր տուած ըզպառ վստահութեամբ՝ դորձածել՝ Փալադաշեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պգտիկներուն Թուագիտութիւնը : Բ.—Թուագիտութիւն Տարրական Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Գ.—Պգտիկներուն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարրական Դասընթացի : Ե.—Պգտիկներուն Նրգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այրեւստան Ընթերցարան ֆրանսերէն լեզուի :